ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03-ը մարտի 2021թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Ս. Մազմանյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության ավագ սպա, մայոր Հ. Մանուկյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանում
1	«Վարբաղ» ՍՊԸ
2	«Պոժտեխնիկա» ՍՊԸ
3	«Պոժմաստեր» ՍՊԸ
4	«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ
5	«Էքսպրես Շին» ՍՊԸ
6	«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ
7	«Ալեռտո» ՍՊԸ
8	«Էլիտ Հիլզ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ հայտի, որում փաստաթղթեր կցված չեն և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել բացել և գնահատել հայտը, ուստի այդ մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեց:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ, «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ և «Պոժմաստեր» ՍՊԸ: «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը կիսատ է գրված՝ բացակայում են հրավերով նախատեսված համապատասխանության սերտիֆիկատի, փաթեթավորման, ծածկոցի պիտակավորման և մատակարարման վերաբերյալ պահանջները, «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի անվանումը ճիշտ է գրված, սակայն տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում տվյալ ապրանքատեսակին /նշված է այլ չափաբաժնի տեխնիկական բնութագիր/, «Պոժմաստեր» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում՝ 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «ինքնաշխատ փականի (спринклер) բացման ջերմաստիճանը 68°C»: Քանի որ պարզաբանման հարցման արդյունքում հրավերում կատարվել է փոփոխություն և հրավերի պայմանագրի նախագծի 6-րդ չափաբաժնից հանվել է վերոգրյալ նախադասությունը, ուստի անհրաժեշտ է շտկել 6-րդ չափաբաժնով ներկայացված տեխնիկական բնութագիրը, հանելով վերոնշյալ նախադասությունը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 03.03.2021թ ծանուցել մասնակիցներին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 7 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Կրակմարիչներ՝ ԿՓ-2	հատ	2 000	4980000	«Վարբադ» ՍՊԸ	4080000	4896000	«Վարբադ» ՍՊԸ	4080000	4896000
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	4716667	5660000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	6360000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	8250000	9900000
2	Կրակմարիչներ՝ ԱԿ-2	հատ	1 000	6480000	«Ալեռտո» ՍՊԸ	5385000	6462000	«Ալեռտո» ՍՊԸ	5385000	6462000
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	6583334	7900000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	6640000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	9333333	11200000
3	Կրակմարիչներ՝ ԱԿ-5	հատ	300	4050000	«Պոժմաստեր» ՍՊԸ	3792000		«Պոժտեխնիկա» ՍՊԸ	3775000	4530000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	3792000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	5850000	7020000
4	Կրակմարիչներ՝ ԿՓ-5	հատ	1 011	4832580	«Վարբադ» ՍՊԸ	3875500	4650600	«Վարբադ» ՍՊԸ	3875500	4650600
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	4296750	5156100
								«Պոժմաստեր» ՍՊԸ	4488840	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	6647325	7976790
5	Հակահրդեհային վերմակներ	հատ	200	429200				«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ	520000	624000
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	600000	720000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	580000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	900000	1080000
6	Կրակմարիչներ՝ ԿՓ-8	հատ	250	1492500	«Ալեռտո» ՍՊԸ	1206250	1447500	«Ալեռտո» ՍՊԸ	1206250	1447500
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	1458334	1750000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	1595000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	2520833	3025000
7	Կրակմարիչներ՝ ԿՓ-25	հատ	200	6600000	«Էքսպրես Շին» ՍՊԸ	5300000	6360000	«Էքսպրես Շին» ՍՊԸ	5300000	6360000
								«Պոժտեխնիկա» ՍՊԸ	5333334	6400000
								«Պոժմաստեր» ՍՊԸ	5680000	
								«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ	7916667	9500000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «Պոժտեխնիկա» ՍՊԸ կողմից 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների գնային առաջարկներից, որտեղ համաձայն ընթացակարգի հրավերի 5.2 կետի դ) ենթակետի՝ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը: Վերոնշյալ մասնակցի 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների գնային առաջարկներում հիմք ընդունելով ներկայացված արժեքները, ԱԱՀ-ները և ընդհանուր գները սխալ են հաշվարկված, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից այդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկները մերժվեցին:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի 5-րդ չափաբաժնին գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 09.03.2021թ. բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին ծանուցվել է 12.03.2021թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում բանակցություններին ներկայացել է միայն «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ, սակայն ներկայացրած գնային առաջարկը թողել է անփոփոխ: Վերոնշյալ չափաբաժիններով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները նույն պես մնացել են անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 5-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 16.03.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին և 4-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ, 2-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Ալեռտո» ՍՊԸ, 3-րդ չափաբաժնով՝ «Պոժմաստեր» ՍՊԸ, 7-րդ չափաբաժնով՝ «Էքսպրես Շին» ՍՊԸ և վերջիններիս, անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Ս. Մազմանյան

Գնահատող Հ. Մանուկյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան